ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՁ-22/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Համազգեստ /արական սեռի ծառայողների/- 30 լրակազմ Բաճկոն ամենօրյա -մուգ կապույտ, (համապատասխան ուսադիրներով և թևքանշանով), (317գ/մք ±3% խտությամբ 67% բուրդ ±3%, 33%Պ/Է ±3%) կտորից, կազմված է լանջափեշերից, թիկնամասից, օձիքից, և թևքերից: Լանջափեշերը միացվում են կենտրոնական շղթայով, կոկետկայով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կապույրները կոճկվում են երկու մուգ կապույտ փոքր կոճակներով: Կողային գրպանները շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով է, կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Թիկնամասը կոկետկայով: Օձիքը ծալովի, թևքերը ներկարված երկուական մուգ կապույտ փոքր կոճակներով կոճկվող, մանժետներով: Աստառը՝ 90 գ/մք ±3% խտությամբ մուգ կապույտ կտորից: Ուսադիրների շրջանում երեք փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Բաճկոն՝ տաք ներդիրով, մուգ կապույտ (210 գ/մք ±3% խտությամբ 100%Պ/Է) անջրաթափանց կտորից, կազմված է լանջափեշերից, թիկնամասից, օձիքից, և թևքերից, ձախ թևքին կարվում է թևքանշան, : Ներդիրը՝ հանովի, որը մշակվում է 90 գ/մք ±3% խտությամբ մուգ կապույտ կտորով պատված մեմբրանե տաքացուցիչով (100% պ/է , 200գ/մք ±3% խտությամբ) ներդիրը զարդակարվում է քառակուսի տեսքով, չունի թևքեր:Ներդիրը միասնական շղթայով ամրանում է բաճկոնին: Լանջափեշերը միացվում են կենտրոնական շղթայական և կոճակով կոճկվող կափույրով, կոկետկայով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց ներդիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են երկու փոքր մուգ կապույտ կոճակներով կամ կոճգամներով: Կողային գրպանները շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող:

	Մեջքը կոկետկայով, օձիքը ծալովի: Ուսադիրների շրջանում երեք փակօղակներ և երկու կամրջակներ՝ ուսադիրների ամրացման համար: Կիտել՝ երկփեղկ, ամենօրյա, մուգ կապույտ կտորից (317գ/մք ±3% խտությամբ, 67% բուրդ ±3%, 33%Պ/Է ±3%) (համապատասխան վրանակար ուսադիրներով և թևքանշանով), մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, հետ ծալված օձիքով և սովորական երկկարանի թևքերով, ձախ թևքին կարվում է թևքանշան, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունեն կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպան: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ, օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 90 գ/մք ±3% խտությամբ մուգ կապույտ կտորից: Երկկոճկուն (երկփեղկ)՝ 6 ոսկեգույն ալյումինե համաձուլվածքով մեծ կոճակներով՝ կնգումի սպիտակ մորթու պատկերով տեղադրված երկշարք, թիկնամասի ներքևում՝ առանց կտրվածքի- 10 հատ: Կիտել՝ միափեղկ, ամենօրյա, մուգ կապույտ կտորից (317գ/մք ±3% խտությամբ 67%բուրդ ±3%, 33%Պ/Է ±3%) (համապատասխան վրանակար ուսադիրներով և թևքանշանով), մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, հետ ծալված օձիքով և սովորական երկկարանի թևքերով, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունեն կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպան: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ,օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 90 գ/մք ±3% խտությամբ մուգ կապույտ կտորից: Միաշարք երեք ոսկեգույն մեծ կոճակներով՝ ալյումինե համաձուլվածքով, կնգումի սպիտակ մորթու պատկերով, կարովի թիկնամասով և փողքերի կտրվածքով -20 հատ: Տաբատ՝ (զույգ) մուգ կապույտ գույնի (317 գ/մք ±3% խտությամբ, 67%բուրդ ±3%, 33%Պ/Է ±3%) կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի, 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակարով, գոտին գոտեմակողերով, որոնցից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի կարի վրա: Գուլֆիկը մշակվում է շղթայով և կոճկվում է երկու կոճակով, արտաքին գրպանները թեք են: Տաբատի աստառը մինչև ծնկները հասնող 90 գ/մք ±3% խտությամբ մուգ կապույտ կտորից-60 հատ: Փողկապ՝ մուգ կապույտ գույնի, (35%բուրդ ±3%, 65%պ/է ±3%, 294 գ/մք ±3% խտությամբ) ունի լայնացած ուրվագծով ձևվածք: Պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում սուր անկյունով, վերևում՝ մշտական հանգույցով: Օձիքի տակ ամրանում է էլաստիկ ժապավենով և ամրակով / երկճյուղանի մետաղյա ոսկեգույն շերտիկ/:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՁ-22/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	